ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՀԲՈՒԲԵ ՍԵԴԻՂԻ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ 1828 ԹՎԱԿԱՆԸ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու
Ք.Պ.Կոստիկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների
դոկտոր Պ.Ա. Չոբանյան

պատմական գիտությունների թեկնածու
Թ.Ռ. Մարտոյան

Առաջատար կազմակերպություն՝ ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. սեպտեմբերի 18-ին, ժ. 14.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հունիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ Ռ. Պ. Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Իրանի հետ Հարավային Կովկասի[1] տեղական իշխանությունների փոխհարաբերությունների ընտրված ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությունն ունի գիտական կարևոր նշանակություն և արդիական է տարածաշրջանի ներկայիս խնդիրների խորքային ըմբռնման համար: Թեման կարևոր է նաև Իրանի հետ Այսրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայերի պատմական կապերը ուսումնասիրելու տեսանկյունից:

XVIII դարի երկրորդ կեսին, երբ Իրանը թուլանալով, այլևս ի վիճակի չէր Այսրկովկասը իր տիրապետության տակ պահելու, իրանական տիրապետության տակ գտնվող տեղական իշխանությունները՝ ինքնուրույնություն ձեռք բերեցին: Վրաստանի վալիությունը վերածվեց Քարթլ-Կախեթի թագավորության, իսկ մյուս շրջաններում ձևավորվեցին կիսանկախ խանություններ ու սուլթանություններ: Այս նորաստեղծ մանր պետական կազմավորումները ժամանակ առ ժամանակ ենթարկվում էին Ատրպատականում իշխանության գլուխ անցած Իրանի գահի հավակնորդների ռազմական հարձակումներին ու կախման մեջ ընկնում նրանցից՝ ստիպված լինելով հարկեր վճարել ու պատանդներ տալ: Այսրկովկասի հիշյալ իշխանությունների ձևավորման հիմքում ընկած էին Նադիր շահի օրոք ձևավորված վարչական միավորները, իսկ խաներ էին դառնում հիմնականում առավել ազդեցիկ քոչվոր ցեղերի (կամ ցեղային միավորումների) առաջնորդները, որոնց տնօրինության տակ էին գտնվում հողային ընդարձակ տիրույթներ:

XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1828 թ. ընկած ժամանակահատվածում ինքնուրույնություն ձեռք բերած Այսրկովկասն իր բազմազգ բնակչությամբ դարձավ ռուս-իրանական հակամարտության առարկան՝ անցնելով Ռուսաստանի տիրապետության տակ: Այդ գործընթացը խաղաղ չընթացավ և ուղեկցվեց կողմերի դիվանագիտական պայքարով ու ռազմական ընդհարումներով, որոնցում իրենց դերակատարությունն ունեին նաև Անգլիան ու Ֆրանսիան: Այսրկովկասի խաների մեծ մասը XVIII դարի վերջից բռնում է Իրանի ու Ռուսաստանի միջև խուսանավման ուղին, ինչը որոշ ժամանակ թույլ է տալիս նրանց պահպանել իրենց ինքնուրույնությունը: Ռուսաստանի կողմից 1804 թ. Գանձակի գրավումն ու նրա խանի սպանությունը նշանավորելով ռուսական նվաճողական ծրագրերը՝ պատճառ է դառնում ռուս-պարսկական առաջին պատերազմի բռնկման համար և միաժամանակ վճռական ազդեցություն ունենում հարևան որոշ խաների հետագա քայլերի վրա: Խաների մի մասը կամավոր հպատակություն է հայտնում Ռուսաստանին: Խաների վարքագիծը հիշյալ ժամանակահատվածում մեծապես պայմանավորված էր Իրանի հետ նրանց կապերով, ուստի դրանց համակողմանի ուսումնասիրությունը օգնում է բացահայտել տվյալ ժամանակահատվածի պատմական իրողությունները: Այսրկովկասի խաները Իրանի հետ ունեին կրոնա-մշակութային կապեր՝ հիմնված իսլամի գաղափարախոսության ու պաշտոնական գրագրության լեզվի՝ պարսկերենի վրա, որոնք երբեմն էլ ավելի ամրացվում էին ազգակցական-խնամիական կապերով: Իրանն այդ կապերն օգտագործում էր խաներին իր կողմը գրավելու և ռուսների դեմ պայքարելու համար: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է Իրանի հետ Այսրկովկասի ժողովուրդների ու հիշյալ իշխանությունների կապերի հետազոտման կարևորությամբ, որը թույլ է տալիս ավելի

[1] «Հարավային Կովկաս» աշխարհագրական անվանումը համարժեք է «Այսրկովկաս» կամ Խորհրդային շրջանում առավել գործածական «Անդրկովկաս» անվանը:

ճիշտ ըմբռնել Այսրկովկասի շրջանների Ռուսաստանի տիրապետության տակ անցման իրողությունները և խնդիրների բնույթը: Թեմայի արդիականությունն էլ ավելի կարևորվում է նաև նրանով, որ Այսրկովկասում ներկայումս առկա շատ խնդիրների (մասնավորապես նաև Արցախի խնդիրը) արմատները հասնում են մինչև ատենախոսության մեջ ընդգրկված ժամանակաշրջանը և դրանց լիարժեք վերլուծությունը անհնար է առանց ատենախոսության մեջ քննվող հարցերի հետ համադրության:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է հետազոտել Իրանի իշխանությունների փոխհարաբերությունները Այսրկովկասի խաների, վրաց թագավորների, արքայորդիների ու մյուս իշխանավորների հետ Ռուսաստանի Հարավային Կովկասում առաջխաղացման և նրա նվաճման ժամանակաշրջանում: Այդ նպատակով մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Քննել XVIII դարի երկրորդ կեսին ինքնուրույնություն ձեռք բերած Այսրկովկասի տեղական իշխանությունների (Քարթլ-Կախեթի թագավորության, խանությունների ու սուլթանությունների) ձևավորման առանձնահատկությունները,
2. Հետազոտել Այսրկովկասի տեղական իշխանությունների փոխհարաբերություններն Իրանի շահի գահին հավակնողների ու Աղա Մուհամմադ խան Ղաջարի հետ XVIII դարի երկրորդ կեսին,
3. Լուսաբանել Քարթլ-Կախեթի թագավորի ու Այսրկովկասի խաների քաղաքական դիրքորոշումը XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանի ու Իրանի միջև Այսրկովկասի շուրջ ծագած հակամարտության խնդրում;
4. Վերլուծել Այսրկովկասի խաների ու վրաց արքայորդիների քաղաքական դիրքորոշումը XIX դարի սկզբին Ռուսաստանի նվաճողական քաղաքականության ակտիվացման ու ռուս-իրանական սրվող հակամարտության պայմաններում,
5. Ուսումնասիրել Այսրկովկասի խնդրում Ռուսաստանին հակազդելու գործում Իրանին հովանավորող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Օսմանյան կայսրության դիրքորոշումները,
6. Քննել Այսրկովկասի տեղական իշխանությունների կապերը Իրանի հետ XIX դարի սկզբի ռուս-պարսկական պատերազմների ընթացքում և ղաջարական իշխանությունների ձեռնարկած քայլերը Ռուսաստանի դեմ պայքարում նրանց ներգրավելու ուղղությամբ,
7. Ներկայացնել հայերի դիրքորոշումը ռուս-պարսկական հակամարտության խնդրում և նրանց աջակցությունը ստանալու համար կողմերի ձեռնարկած ռազմավարական քայլերը:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության մեջ փորձ է արվում ժամանակաշրջանի տարալեզու աղբյուրների հիման վրա լիարժեք կերպով ներկայացնել Այսրկովկասի տեղական իշխանությունների փոխհարաբերություններն Իրանի Ղաջարական իշխանությունների հետ: Արդյունքում բացահայտվում են այդ խնդիրներին առնչվող նոր մանրամասներ, որոնք թեև առկա են փաստագրական նյութերում, սակայն երբեմն միտումնավոր, երբեմն էլ ոչ միտումնավոր կերպով դուրս են մնացել գիտական շրջանառությունից:

Ատենախոսության մեջ նորովի է գնահատվում խաների փոխհարաբերություններն Իրանի հետ, որը խորհրդային ժամանակաշրջանի պատմաբանների կողմից երբեմն կողմնակալ մեկնաբանությունների էր արժանանում: Մասնավորապես, հաճախ կոծկվում էին նրանց հակառուսական տրամադրություններն ու գործելաոճը, երբեմն անհիմն կերպով նրանց վերագրվում էր ռուսական կողմնորոշում: Ատենախոսության մեջ անկողմնակալ կերպով լուսաբանվում են Այսրկովկասի տեղի իշխանություններից յուրաքանչյուրի ռուսական տիրապետության տակ անցնելու հետ կապված իրողություններն ու մանրամասները, որոնք օգնում են ճիշտ գնահատել Իրանի, Ռուսաստանի ու եվրոպական պետությունների դերը զարգացող իրադարձություններում: Ատենախոսության մեջ փորձ է արվում ինքնուրույն գնահատական տալ Այսրկովկասի տեղական իշխանությունների վարքագծին, որը պայմանավորված էր իրանական պետության հետ նրանց կապերով ու համագործակցությամբ: Ատենախոսը լուսաբանում է նաև Ռուսաստանի քաղաքականությունը, որն իր ծրագրերն իրականացնելու համար խոստումներ էր շռայլում տեղի քրիստոնյա բնակչությանը՝ ներգրավելու համար նրան Իրանի դեմ պայքարում:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները

Ատենախոսությունն ընդգրկում է XVIII դարի վերջից մինչև 1828 թ. ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում տեղի է ունենում Հարավային Կովկասի տարածքներում մանր պետական կազմավորումների՝ Քարթլ-Կախեթի թագավորության ու կիսանկախ խանությունների ձևավորումը և նրանց աստիճանական անցումը Ռուսաստանի տիրապետության տակ: Ժամանակագրության սկիզբը նշանավորվում է Իրանի ու Ռուսաստանի միջև ծագած սուր հակամարտությամբ, որը XIX դարի սկզբին վերաճում է ռուս-պարսկական պատերազմների: Ժամանակագրական նման սահմանների ընտրությունը պայմանավորված է Ռուսաստանի կողմից Կովկասի նվաճման գործընթացում տեղական իշխանությունների դերն ու նշանակությունը ամբողջական ներկայացնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև 1828 թ. Իրանի ու Ռուսական կայսրության միջև կնքված Թուրքմենչայի հաշտությամբ, որը նշանավորեց Ռուսաստանի Կովկասյան նվաճումների ավարտը:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում պատմականության ու գիտական օբյեկտիվության սկզբունքն է: Պատմական իրողությունները քննելիս աշխատել ենք հնարավորինս օգտագործել ժամանակաշրջանի տարալեզու և բազմաբնույթ (փաստա-վավերագրական ու պատմագրական) աղբյուրները, և հենվելով առավել հավաստի աղբյուրների վրա կատարել տրամաբանական եզրահանգումներ: Քննադատական մոտեցում է հանդես բերվել ռուս և իրանցի պատմագիրների հաղորդած տեղեկությունների ու տվյալների նկատմամբ՝ ճշտելու համար նրանց հավաստիությունը: Հաշվի ենք առել հայ և օտար հետազոտողների թեմային առնչվող վերլուծական ուսումնասիրությունները, որոնք կարևոր են ատենախոսության թեմայում քննվող հարցերի լիարժեք լուսաբանման համար:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ատենախոսության բովանդակությունն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ժամանակաշրջանի Այսրկովկասի ու նրա առանձին շրջանների պատմությունն ու ներկայիս խնդիրների ծագումը հետազոտողներին ու քաղաքագետներին: Աշխատանքը կարևորություն ունի նաև Իրանի հետ Այսրկովկասի ժողովուրդների ու ռուս-իրանական փոխհարաբերությունների պատմությունն ուսումնասիրողների համար:

Աշխատանքի փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, Երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովում ներկայացված զեկույցում: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի կողմից:

Սկզբնաղբյուրների ու գրականության համառոտ տեսություն

Ատենախոսությունը գրելիս օգտագործվել են տվյալ ժամանակաշրջանի հայկական, իրանական, ռուսական և թյուրքական աղբյուրները, եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունները, ինչպես նաև թեմային առնչվող տարալեզու ուսումնասիրությունները: Հիշյալ նյութերի պարսկերեն թարգմանության առկայության դեպքում նախապատվությունը տրվել է այդ տարբերակներին:

Հարուստ պատմական նյութը քննելիս առաջնությունը տրվել է նախ փաստա-վավերագրական աղբյուրներին: Այս շարքում հիշատակության են արժանի Թիֆլիսում Ա. Բերժեի խմբագրությամբ հրատարակված Կովկասի փոխարքայության պատմական փաստաթղթերի ժողովածուն[2], որի ստվարածավալ հատորներում ընդգրկված են Այսրկովկասի ռուսական հրամանատարության, պաշտոնյաների, խաների, վրաց թագավորների, արքայորդիների ու Իրանի իշխանությունների նամակները, հրամանագրերն ու զեկուցագրերը: Դժվար է գերագնահատել XIX դարում Այսրկովկասի ռուսական իշխանությունների կողմից հրատարակված այս հարուստ ժողովածուի պատմական արժեքը տարածաշրջանի XVIII-XIX դարերի պատմության համար: Ատենախոսության թեմայի համար մեծ կարևորություն ունեն նաև հայ-ռուսական փոխհարաբերությունների XVIII-XIX դարերի պատմությանը վերաբերող փաստագրական նյութերի ժողովածուները, որոնցում հրատարակվել են ռուսական կայսրերի, պաշտոնյաների հրամանագրերը, հրահանգները, զեկուցագրերը, որ վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, ինչպես նաև նրանց ու Այսրկովկասի տարբեր շրջաններում բնակվող հայության միջև փոխանակված նամակները[3]: Ռուսաստանի հայերի նկատմամբ վարած քաղաքականության հարցերի լուսաբանման համար կարևոր արժեք է ներկայացնում Ջ. Բուռնությանի

[2] Акты Кавказской Археологической Комиссии (այսուհետև՝ АКАК), т. I-VII, Тифлис, 1866-1878.

[3] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, II, Ереван, 1964, 1967, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, Присоединение Восточной Армении к России, т. I, сб. док., редактор Ц. Г. Агаян, Ереван, 1972.

կազմած փաստագրական նյութերի ժողովածուն[4]: Խորհրդային ժամանակաշրջանում ուսումնասիրվել ու հրատարակվել են Այսրկովկասի երեք հանրապետությունների պատմությանը վերաբերող վրացական ու պարսկական վավերագրերը, որոնց բովանդակած փաստագրական տվյալները մեծ արժեք են ներկայացնում ատենախոսության թեմայի համար և օգտագործվել են նրա շարադրանքում[5]: Այս շարքում կարևորում ենք հատկապես Երևանի Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, որոնք հրատարակվել են այդ շարքի չորս հատորներում[6]: Ուսումնասիրել և ատենախոսության մեջ ներգրավել ենք թեմային առնչվող վավերագրեր, որոնք հրատարակվել են Իրանում տպագրված ղաջարական ժամանակաշրջանի նամակների ու հրամանագրերի ժողովածուներում[7]:

Այսրկովկասի իրանական տիրապետության շրջանի վարչա-քաղաքական դրության պատկերը լիարժեք ներկայացնելու համար օգտվել ենք պարսկական աղբյուրներից, որոնք են «Թեզքիրաթ ալ-մոլուքը», Իսքանդար Բեկ Թորքեմանի «Աբասի աշխարհակալության պատմությունը»[8], Նադիր շահի ժամանակաշրջանին նվիրված Միրզա Մեհդի խան Աստարաբադիի «Նադիրի պատմությունը», Միրզա Մուհամմադ Քազեմի «Նադիրի աշխարհակալության պատմությունը» պատմագրական երկերից[9]: Այս խնդրին նվիրված հետազոտություններից հարկ է նշել արևելագետներ Ի. Պ. Պետրուշևսկու, Մ. Արունովայի և Վ. Մինորսկու աշխատությունները[10]:

Ընդգրկված ժամանակաշրջանի Այսրկովկասի պատմության համար արժեքավոր են առանձին խանությունների պատմությանը նվիրված պատմագրական երկերը: Այս շարքում հատկանշական են Արևելյան Այսրկովկասի պատմությանը նվիրված XIX դարի կեսին Աբբաս Ղուլի Բակիխանովի կողմից գրված «Գյուլիստան-ե Իրամ» աշխատությունը[11], Ղարաբաղի պատմագիրներ Միրզա Ադիգյոզալ Բեկի,

---

[4] Bournoutian G.A., Russia and the Armenians of Transcaucasia 1797-1889, A document. record. Costa Mesa, California, 1998.

[5] Грамоты и другие исторические документы XVIII столетия относящиеся до Грузии, т. II, вып. II, (от 1769 по 1801 годь), под ред. А. А. Цагарели, С. Петербург, Типография В. Ф. Киршбаума, д. М-ва Финансов Дворц. Пл. 1902; Тбилисская коллекция персидских фирманов, т. II, Тбилиси, 1989; Передняя Азия в документах, кн. I, Нахичеванские рукописные документы, XVII-XIXвв., Тифлис, 1936,

[6] Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ I, II, Երևան, 1956, 1959: Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, IV, Երևան, 2005, 2008:

[7] نصیری، محمد رضا، اسناد و مکاتبات تاریخی ایران (قاجاریه)، جلد ۱، ۲، تهران ، ۱۳۶۶ ؛

اسنادی از روابط ایران با منطقهٔ قفقاز، تهران، ۱۳۷۲ ،

نامه‌های سیاسی و تاریخی سید الوزراء قائم مقام فراهانی، به کوشزشش جهانگیر قائم مقامی، تهران، ۱۳۵۸.

[8] تذکرة الملوک، بکوشش محمد دبیرسیاقی، تهران، ۱۳۳۲

اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، به کوشش شاهرودی، تهران، طلوع با همکاری سیروس ، ۱۳۶۴،

[9] میرزا مهدی خان آسترابادی، جهانگشای نادری، تهران، ۱۳۷۷

Мухаммад Казим, Наме-йи аламара-йи Надири, т. I, II, III, Москва, 1960, 1965, 1966.

[10] Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI - начале XIX вв., Ленинград, 1949; دولت نادر شاه افشار، ترجمه حمید مؤمونی، تهران، شبگیر ۱۳۵۶، ص ۳۴۵

آرونوا م. و اشرافیان ک.،

سازمان اداری حکومت صفوی یا تحقیقات و حواشی و تعلیقات استاد مینورسکی بر تذکرة الملوک، تهران، ۱۳۳۴،

آرونوا م. و اشرافیان ک.، دولت نادر شاه افشار، ترجمه حمید مؤمونی، تهران، شبگیر ۱۳۵۶

[11] باکیخانف عباسعلی، گلستان ارم، به کوشش عبدالکریم علی زاده و دیگران، باکو، فرهنگستان علوم جمهوری

Միրզա Ջամալ Ջավանշիրի և Միրզա Յուսուֆ Ներսեսովի երկերը[12], Թալիշի պատմությանը նվիրված Սա'իդ Ալի իբն Քազեմ Բեկի «Ջավահիր-նամե-ե Լենքորան» և Միրզա Խոդավերդիի «Ախբար-նամե» աշխատությունները[13], Շաքիի պատմությանը վերաբերող Քարիմի Աղա Ֆաթեհի պատմագրական երկը[14]: Այս երկը նախապես վերագրվել էր Աբդուլ Լաթիֆ Էֆենդիին[15], սակայն հետագա ուսումնասիրողներին հաջողվել է ճշտել նրա հեղինակի անունը որպես Քերիմ Աղա Ֆաթեհ: Այս աղբյուրներն օգտագործելիս հաշվի են առնվել, որ դրանք գրվել են արդեն Ռուսաստանի տիրապետության շրջանում և հիմնականում Կովկասի տեղի ազնվականության ներկայացուցիչների և անգամ նախկին խաների ժառանգների (ինչպես Աբբաս Ղուլի Բակիխանովի դեպքում) կամ նրանց մերձավոր պաշտոնյաների կողմից: Ուստի և նրանցում երբեմն առկա է որոշ կողմնակալ վերաբերմունք պատմական փաստերի նկատմամբ, որը մասնավորապես նշմարվում է Ղարաբաղի պատմությանը նվիրված Միրզա Ադիգյոզալ Բեկի ու Միրզա Ջամալի երկերում: Պատկանելով Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում զգալի հարստություն ու կալվածքներ ձեռք բերած թյուրքական վերնախավին[16] հիշյալ հեղինակները ջանք չէին խնայում խանական ընտանիքի անդամների ու իրենց դասի մյուս ներկայացուցիչների շահերը պաշտպանելու և իրավունքները հիմնավորելու համար:

Ղարաբաղի XIX դարի պատմագրության մեջ կարևոր տեղ է գրավում հայազգի Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի» («Ճշմարտացի պատմություն») պարսկերեն պատմագրական երկը: Այս հեղինակը լինելով հայ, որն իր կրթությունը ստացել էր Իրանում, իր պատմությունը շարադրել է պարսկալեզու պատմագրության ավանդույթներին համապատասխան՝ սկսելով այն հնագույն ժամանակներից: Շարադրելով Ղարաբաղի հայկական մելիքությունների, մահմեդական խանության և XIX դարի ռուս-պարսկական պատերազմների մանրամասն ու հավաստի պատմությունը՝ հեղինակը չի ջանացել խեղաթյուրել իրեն հայտնի պատմական փաստերը: Նրա երկում չի զգացվում ոչ թյուրքալեզու հեղինակներին բնորոշ ռուսամետ կողմնորոշումն ու խաների օգտին կատարված որոշ կողմնակալությունը[17], ոչ էլ պարսկական պալատական պատմագրությանը հատուկ իրադարձությունների միակողմանի լուսաբանումը:

Ընդգրկված ժամանակաշրջանի Այսրկովկասի պատմության հայկական աղբյուրներից ատենախոսության թեմայի համար կարևոր նշանակություն ունեն Մ. Չամչյանի «Հայոց պատմությունը»[18] և Դիվան հայոց պատմության շարքում

آذربایجان ، ۱۹۷۰،

سازمان اداری حکومت صفوی یا تحقیقات و حواشی و تعلیقات استاد مینورسکی بر تذکرة الملوک، تهران، ۱۳۳۴،

[12] Мирза Адигезал-бек, Карабаг-наме, Баку, 1950; یوسف قراباغی، تاریخ صافی، به کوشش حسین احمدی، میرزا

تهران ، ۱۳۹۰، میرزا جمال جوانشیر قره‌باغی، تاریخ قره‌باغ ، مقدمه تصحیح و تحشیه از حسین احمدی، تهران ۱۳۸۲،

[13] میرزا احمد،میرزا خداویردی ، اخبارنامه،مترجم علی حسین زاده، باکو، ۱۹۹۵, سعید علی بن کاظم بیگ، جواهرنامهٔ لنکران، انستیتو نسخ خطی فرهنگستان علوم آذربایجان محمد فضولی، باکو، شماره ۳۰۴۹ -۴۶۴۷

[14] کریم آقا فاتح، تاریخ خانات شکی، سه رساله در بارهٔ قفقاز، مقدمه تصحیح و یادداشتها: حسین احمدی

[15] Абдул-Латиф Эфенди, История шекинских ханов, Баку, 1926.

[16] Мирза Адигезал-бек, նշվ. աշխ. էջ 10-19:

[17] Иманов Г., Вопросы историографии Азербайджана, Труды Азербайджанского филиала АН, т. 30, Баку 1936, с. 156.

[18] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, Երևան, 1984:

ընգրկված Ամենայն Հայոց կաթողիկոսների հիշատակարանները[19]: Չամչյանի երկը թեև հիմնականում հետազոտություն է, որում ընդգրկված է հնագույն ժամանակներից մինչև 1784թ. ընկած ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմությունը, այնուամենայնիվ հեղինակին ժամանակակից շրջանի պատմության համար այն ունի սկզբնաղբյուրի արժեք: Ատենախոսության թեմային վերաբերող հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև XIX դարի հայ ուսումնասիրողներ Ռաֆֆին և Լեոն: Ռաֆֆու պատմագիտական ուսումնասիրությունը նվիրված Ղարաբաղի հայ մելիքությունների պատմությանը[20] հեղինակի վկայությամբ հիմնված է բազմաթիվ հայ և օտար աղբյուրների վրա, որոնց մի մասը մեզ չի հասել: Այս պատճառով, չնայած նրանում առկա որոշ հակասություններին և անճշտություններին, այս երկը Ղարաբաղի XVIII-XIX դարերի պատմության արժեքավոր հետազոտություններից է: Ղարաբաղի հայության պատմության առանձին խնդիրների առնչությամբ կատարված կարևոր ուսումնասիրությունների հեղինակ է պատմաբան Լեոն[21]:

XVIII դարի Այսրկովկասի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից են վրացական աղբյուրները, որոնցից օգտագործել ենք Մելիքսեթ-Բեկի հայերեն թարգմանությամբ ու մեկնաբանություններով ներկայացված հատվածները, որոնք վերաբերում են Հայաստանի ու հայերի պատմությանը[22]: Իրենց բովանդակած տեղեկությունների անկողմնակալությամբ առանձնանում են օտարերկրացի ուղեգիրների նյութերը, որոնք ևս ջանացել ենք ընդգրկել ատենախոսության մեջ[23]:

Այս շրջանի Կովկասի պատմության լավագույն աղբյուրներից են ռուսական պատմագրության ներկայացուցիչներ Պ. Բուտկովի, Ն. Դուբրովինի և Վ. Պոտտոյի աշխատությունները[24], որոնք հարուստ պատմական տվյալներ բովանդակելով հանդերձ, գրված են ռուսական կայսերապաշտական դիրքերից և առանձին դեպքերում զգուշավոր մոտեցում են պահանջում, քանի որ Իրանի ու Ռուսաստանի միջև խուսանավող խաները ներկայացվում են որպես դավաճաններ, իսկ ռուսների կոշտ դիրքորոշումը առանձին դեպքերում արդարացվում ու կոծկվում է:

---

[19] Դիվան հայոց պատմության, մասն II, Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանը 1763-7, Թիֆլիս, տպ. Մ. Շարաձե, 1893, Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, կազմեց Վ. Գրիգորյանը, գիրք I, հատոր Ա, Երևան, 1984, էջ 596:

[20] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1959:

[21] Լէօ, Սահմանավէճեր, Լոռի-Ախալքալաք, Ղարաբաղ Թիֆլիս, 1919, Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914,

[22] Մելիքսեթ-բեկ Լ. Մ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955:

[23] Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ, Երևան, 1934: Haxthausen, Traanscaucasia, Sketches of the Nations and races between Black Sea and the Caspian, London, Chapman and Hall, 1854; مازندران و رابینو ه . ل . سفرنامه

؛ آستراباد ، ترجمه غلامعلی وحید مازندرانی، تهران ۱۳۴۳

انتوان گیوم اولیویه ، سفرنامه اولیویه، ترجمهٔ محمد طاهر میرزا، به تصحیح غلامرضا ورهرام، تهران، ۱۳۷۱،

درویل کاسپار، سفر به ایران، ترجمه منوچهر اقباد مقدم ، تهران، شباویز ۱۳۷۰،

[24] Бутков П. Г., материалы для новой истории Кавказа, ч I. II, Санктпетербург, 1869, Дубровин Н., История воины и владычества русских на Кавказе, т. III, VI, С. Петербургъ, 1886, 1888; Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографях, т. 1, вып. I-IV, С. Петербург, 1887; Утверждение русского владычества на Кавказе, т. I-III, Тифлис, 1901-1904,

Իրանական պատմագրությունն ի դեմս Աղա Մուհամմադ շահի պալատական պատմագիր Մուհամմադ Սարավիի[25], թագաժառանգ Աբբաս Միրզայի քարտուղար Աբդ ալ-Ռազզաղ Դումբուլիի[26] և XIX դարի երկրորդ կեսին հանդես եկած պատմագիրներ Ռեզա Ղուլի խան Հեդայաթի և Լիսան ալ-Մուլք Սեփեհրիի[27], բովանդակելով առատ նյութ խաների ու իրանական իշխանությունների միջև կապերի և համագործակցության մասին, այնուամենայնիվ պատմական դեպքերի հանդեպ ունեն խիստ կողմնակալ վերաբերմունք: Իրադարձությունները հաճախ ներկայացվում են խեղաթյուրված կերպով, Իրանի անհաջողությունները երբեմն կոծկվում են, իսկ հաղթանակ տարած ռուսների ուժերը ուռճացվում:

Հաշվի առնելով ընդգրկված ժամանակաշրջանում Ռուսաստանի ու Իրանի հակամարտությունը և համապատասխանաբար նրանց պատմագիրների հաճախ կողմնակալ վերաբերմունքը պատմական իրադարձություններին՝ վերոհիշյալ աղբյուրներից օգտվելիս հաճախ անհրաժեշտություն է զգացվել համեմատելու դրանք այլ աղբյուրների տվյալների հետ և ճշտելու նրանց հաղորդումները: Հատկապես խուսափել ենք պատմական իրադարձություններին նրանց կողմից տրված ոչ արդարացի գնահատականների ներմուծումից:

Այսրկովկասի տվյալ ժամանակաշրջանի պատմությանը նվիրված մեծ թվով ուսումնասիրություններ են գրվել, որոնցում սակայն կարծում են ատենախոսության թեման բավարար չափով ներկայացված չէ: Ատենախոսության մեջ ընդգրկել ենք թեմային առնչվող հարուստ գիտա-հետազոտական գրականություն, որոնք օգնում են առավել լիարժեք պատկերացում կազմել քննվող իրողությունների մասին և բազմակողմանի վերլուծության ենթարկել դրանք:

Ատենախոսությունը գրելիս ներգրավել ենք խորհրդային ու ետ-խորհրդային շրջանի հայ և օտար պատմաբանների հետազոտությունները: Հաշվի են առնվել հայ ժողովրդի պատմության այնպիսի հիմնարար աշխատության հատորները, որպիսին է Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի հրատարակած բազմահատորյակը[28], Կովկասի այդ շրջանի պատմությանը առնչվող Քեմբրիջի Համալսարանի[29] և Իրանի պատմաբանների ուսումնասիրությունները[30]: Ատենախոսության մեջ ընդգրկված ժամանակաշրջանի պատմության տարբեր խնդիրներին նվիրված բազում արժեքավոր ուսումնասիրություններից ուշադրության են արժանի թեմայի ընդգրկած ժամանակաշրջանում Կովկասի հայության պատմության զանազան խնդիրների առնչությամբ գրված Ալ. Երիցյանի, Ա. Հովհաննիսյանի, Վ. Գրիգորյան, Վ. Դիլոյանի,

---

[25] محمد فتح الله بن محمد تقی ساروی، تاریخ محمدی ، تهران ۱۳۷۱

[26] عبد الرزاق مفتون دنبلی، مآثر سلطانیه، تهران، ۱۳۵۱

[27] هدایت رضا قلی خان، روضة الصفای ناصری، ج. ۹،تهران، ۱۳۳۹؛

سپهر ، محمد تقی بن محمد علی، ناسخ التواریخ، ج۲، تهران، اساطیر ، ۱۳۷۷،

[28] Հայ ժողովրդի պատմություն, h. IV, V, Երևան, 1972, 1974:

[29] The Cambridge History of Iran, v. 7, Cambridge, Cambridge University Press, 1991.

[30] جهانگیر میرزا، تاریخ نو، به سعی و اهتمام عباس اقبال آشتیانی، تهران، کتابخانه علمی و شرکاه ۱۳۲۷،

محمد صادق وقایع نگار مروزی، تاریخ جنگهای ایران و روس، گردآورنده:حسین آذر، به تصحیح امیر هوشنگ آذر، ۱۳۶۹.

نفیسی، سعید، تاریخ اجتماعی و سیاسی ایران، دو جلد، تهران، بنیاد، ۱۳۶۸

آقاجانی عبدالکریم، جستارهایی‌تاریخ تالش در گستره تاریخ ایران، جلد ۱ ، تهران،۱۳۷۸ .

قوزانلو، جمیل، تاریخ نظامی ایران، جلد ۲، تهران شرکت مطبوعات ، ۱۳۱۵،

Պ. Չոբանյանի, Ջ. Բուռնությանի և Ք. Կոստիկյանի հետազոտությունները[31]: Իրանի պատմության արժեքավոր հետազոտություններից ընդգրկվել են Ն. Կուզնեցովայի, Վ. Բայբուրդյանի, Ալի Փուր-Սեֆրի, Սաիդ Նաֆիսիի և Հուսեյն Ահմադիի[32] մենագրությունները: Իրանի տվյալ ժամանակաշրջանի դիվանագիտության պատմության արժեքավոր ուսումնասիրություններից են Բ. Բալայանի և Ա. Հովհաննիսյանի աշխատությունները[33], որոնք ևս օգտագործել ենք ատենախոսության մեջ:

Ատենախոսության մեջ ընդգրկվել են Արևելյան Վրաստանի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնց մեջ կարելի է առանձնացնել Ալենի[34], Գոլովինի[35] ու Կիկոձեի աշխատությունները[36]: Չնայած իրենց կողմնակալ, երբեմն ռուսամետ ու հակահայկական հայեցակետերին, Արևելյան Այսրկովկասի XVIII-XIX դարերի պատմության համար որոշ արժեք են ներկայացնում Խորհրդային Ադրբեջանի պատմաբաններից մի քանիսի՝ Գ. Աբդուլլաևի, Խ. Իբրահիմբեյլիի և Ջ. Մուսաֆաևի աշխատությունները, որոնք օգտագործել ենք խանությունների հիշյալ շրջանի պատմության առանձին հարցեր լուսաբանելու համար[37]: Այնուամենայնիվ Արևելյան Այսրկովկասի հայաբնակ շրջանների պատմական անցյալի առավել ճշմարիտ ու լիարժեք ներկայացման համար հիշյալ աշխատությունների հետ զուգահեռաբար անհրաժեշտություն է զգացվել հաշվի առնելու հայագետների ուսումնասիրությունները, որոնց մեջ առանձնանում են Ս. Երեմյանի, Ա. Մաղալյանի, Ռ. Տիտանյանի, Ջ. Բուռնությանի և Գ. Ստեփանյանի աշխատանքները[38]:

---

[31] Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Երևան, 1895: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան, 1959: Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում (1780-1800), Երևան, 1958: Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989: Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006: Bournoutian G.A., Eastern Armenia in the Last Decades of Persian Rule 1807-1828, Malibu, California, 1982; Ք. Կոստիկյան, Հայ-իրանական հարաբերությունները ԺԹ դարի առաջին երեսնամյակում, Լևոն Խաչիկյան, 90, Երևան, 2010, էջ 182-190:

[32] Кузнецова Н. А., Иран в первой половине XIX века, Москва, 1983; Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005:

پور صفر، علی، حکومتهای محلی قفقاز در عصر قاجار، تهران،۱۳۷۷ .ص ۲۱۵، نفیسی، سعید، تاریخ اجتماعیو

سیاسی ایران، دو جلد، ۱۳۶۸، حسین احمدی، تالشان از دورهٔ صفویه تا پایان جنگ‌های ایران و روس، تهران، ۱۳۸۰،

[33] Балаян Б. П., Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении к России, Ереван, 1988; Иоаннисян А., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX, Ереван, 1958.

[34] Allen W.E.D., A History of Georgian People, London, 1932.

[35] Головин А., Историческое обозрение Грузии, 1864.

[36] Кикодзе Г., Ираклий второй, Тбилиси, 1948.

[37] Абдуллаев Г., Азербайджан в XVIII веке и взаимоотношения его с Россией, Баку, 1965; Абдуллаев Г., Из истории Северо-Восточного Азербайджана в 60-80-х гг. XVIII века, Баку, 1958, Ибрагимбейли Х., Россия и Азербайджан в первой трети XIX века, Москва, 1969; Мустафаев Дж., Северные Ханства Азербайджана и Россия, Баку, 1989.

[38] Երեմյան Ս. S., Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 153: Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007: Տիտանյան Ռ., Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797թթ.), Երևան, 1981, 365: Bournoutian G. A., Eastern Armenia in the Last Decades of Persian Rule 1807-1828, Malibu, California, 1982; Stepanyan G. S., Armenians of Baku Province in the second half of the 19th Century, Yerevan, 2013.

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք իրենց հերթին բաժանվում են 9 ենթագլուխների), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են հիմնական նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը վերնագրված է **«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ. ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ»**: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Հարավային Կովկասի տեղական իշխանությունները Նադիր շահի մահից հետո» վերնագիրը կրող առաջին ենթագլխում ներկայացվում է Հարավային Կովկասում ինքնուրույնություն ստացած Քարթլ-Կախեթի թագավորության, խանությունների ու սուլթանությունների ձևավորման առանձնահատկությունները: Այդ առանձնահատկությունները պայմանավորված էին իրանական տիրապետության շրջանում գոյություն ունեցող վարչա-քաղաքական բաժանումներով և հարստություն ու իշխանություն ձեռք բերած իշխանական տների, քոչվոր ավագանու գոյությամբ: Այս իրողության առավել լիարժեք ներկայացման համար քննել ենք Իրանի Սեֆյան և Աֆշարական պետությունների տիրապետության ժամանակաշրջանում Այսրկովկասի վարչա-քաղաքական բաժանումների կապը XVIII դարի երկրորդ կեսում Քարթլ-Կախեթի թագավորության, խանությունների ու սուլթանությունների ձևավորումը: Նույն ենթագլխում փորձել ենք նաև տալ XVIII դարի երկրորդ կեսում Այսրկովկասում ձևավորված կիսանկախ մանր պետական կազմավորումների փոխհարաբերությունները միմյանց հետ՝ առանձնացնելով նրանցից առավել զորեղներին, որոնց նկատմամբ քաղաքական ազդեցության համար սկսված պայքարով սկզբնավորվում է ռուս-իրանական հակամարտությունը:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է ***«Իրանի շահի գահին հավակնողների պայքարը Հարավային Կովկասի տարածքների համար 1748-1795 թթ.»***: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Իրանում միասնական իշխանություն չկար և այն մասնատվել էր շահի գահին հավակնող իշխանավորների միջև, որոնք մշտական պայքարի մեջ էին միմյանց դեմ: Այս ժամանակաշրջանում Իրանը կորցնում է գերիշխանությունը Այսրկովկասի շրջանների նկատմամբ և միայն 1795 թ. ռազմական արշավանքի արդյունքում Աղա Մուհամմադ խանին հաջողվում է կարճ ժամանակով վերականգնել իրանական տիրապետությունը նախկինում Սեֆյան պետության կազմի մեջ մտնող Հարավ-Կովկասյան տարածքներում: Ատենախոսության այս ենթագլխում ջանացել ենք լիարժեք ներկայացնել Ադիլ և Իբրահիմ շահերի օրոք նրանց գերիշխանությունը անվանապես ճանաչած Հարավ-Կովկասյան շրջանները, քննել Իրանի գահի հավակնորդների պայքարը Այսրկովկասի առանձին խանությունները իրենց ենթարկելու համար, Այսրկովկասի խանությունների կարգավիճակը Իրանի Քերիմ Խան Զենդի օրոք, նաև Աղա Մուհամմադ խանի ջանքերը Հարավային Կովկասում իրանական տիրապետությունը վերահաստատելու ուղղությամբ:

«Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը Այսրկովկասում XVIII դարում» ենթագլուխը նվիրված է Ռուսական կայսրության Այսրկովկասում վարած

նվաճողական քաղաքականության ընդհանուր վերլուծությանը՝ սկսած նրա սկզբնավորումից մինչև XVIII դարի վերջն ընկած ժամանակաշրջանում: Ներկայացվում են այդ քաղաքականության հեռահար նպատակները, դրանց իրականացման համար կազմված ծրագրերը և այդ ուղղությամբ ձեռնարկված դիվանագիտական ու ռազմական քայլերը: Օգտագործելով Իրանի թուլացմամբ պայմանավորված նպաստավոր իրադրությունը՝ Ռուսական կայսրությունը XVIII 80-ականներից գործնական քայլեր է ձեռնարկում Հարավային Կովկասի նվաճման իր ծրագրերն իրականացնելու համար: Շռայլ խոստումներով ռուսական կառավարությունը ձեռք է բերում հավատակից հայ և վրացի ժողովուրդների վստահությունն ու աջակցությունը, որն անհրաժեշտ էր Արևելյան Վրաստանում հաստատվելու և այնուհետև հարևան մահմեդական խանությունները հպատակեցնելու, նաև Իրանի հակազդեցությանը դիմագրավելու համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է **«ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՀԵՏ (1798-1806 ԹԹ.) ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ»**: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

Այս գլխի առաջին ենթագլխում՝ ***«Այսրկովկասի խաների դիրքորոշումը ռուս-իրանական հակամարտության նկատմամբ և փոխհարաբերությունները Իրանի հետ (1798-1803 թթ.)»***, քննվում է խաների խուսանավման քաղաքականությունը երկու հզոր պետությունների՝ Իրանի ու Ռուսաստանի միջև սրվող հակամարտության պայմաններում: Այսրկովկասի խաների մեծամասնությունը (Ղարաբաղի, Երևանի, Թալիշի, Նախիջևանի) նախ հպատակություն է հայտնում 1798 թ. Իրանի շահի գահին հաստատված Ֆաթհալի շահ Ղաջարին: Այդ խաները սակայն չէին կարող արհամարհել Արևելյան Վրաստանն իր հովանավորության տակ առած Ռուսական կայսրությանը, որի պաշտոնյաների հետ նրանք նամակագրական կապի մեջ էին՝ հավաստիացնելով, որ պատրաստ են ընդունել Ռուսաստանի հովանավորությունը: 1801 թ. Քարթլ-Կախեթի թագավորության վերացումից հետո Ռուսաստանն ակտիվացնում է իր նվաճողական քաղաքականությունը հարևան իշխանությունների նկատմամբ, որը հարկադրում է նրանցից մի քանիսին (Մենգրելիա և Իմերեթիա) կամավոր ընդունել ռուսաց կայսեր հպատակությունը, կամ հպատակության խոստումներով խուսանավել Իրանի ու Ռուսական կայսրության միջև: Ատենախոսության այս ենթագլխում քննվում է տվյալ շրջանում երկու հզոր պետությունների միջև դիվանագիտական լարախաղացության ուղին բռնած խաների վարքագիծը՝ պայմանավորված ռուսական նվաճողական քաղաքականության պարտադրանքով և Իրանից սպասվող հակազդեցության ու տեղի իշխանություններին խոստացվող աջակցության ակնկալիքներով:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է ***«Այսրկովկասի խաները ռուս-իրանական պատերազմի սկզբնական շրջանում և փոխհարաբերությունները Իրանի իշխանությունների հետ (1804-6 թթ.)»***: Սա առաջին ռուս-պարսկական պատերազմի այն վճռորոշ ժամանակահատվածն է, որում ուրվագծվում է պատերազմի հիմնական արդյունքը և Ռուսաստանի կողմից նվաճվում են այն շրջանները (բացառությամբ Հյուսիսային Թալիշի), որոնք այնուհետև ամրագրվում են Գյուլիստանի հաշտության պայմանագրով: Ռուսաստանի ռազմական նվաճումների սկիզբն ազդարարող Գանձակի բերդի գրավումը և նրա իրանական կողմնորոշում ունեցող խանի սպանությունը դառնում է առաջին ռուս-պարսկական պատերազմի բռնկման շարժառիթն ու հարևան մյուս խանությունների Ռուսաստանի տիրապետության տակ խաղաղ անցման հիմնական պատճառը:

Ատենախոսության այս ենթագլխում դիտարկվում է Ցիցիանովի գլխավորությամբ ռուսական իշխանությունների կողմից Այսրկովկասում իրականացված նվաճողական քաղաքականությունը և դրան ի պատասխան Իրանի կողմից ձեռնարկված ռազմական միջոցառումները: Քննվում են Այսրկովկասի խաների մի մասի (ինչպես օրինակ Բաքվի Հուսեյն Ղուլիի և Ղարաբաղի Իբրահիմ խանի) գործողությունները և վարքագիծը, որոնք փոխհամաձայնեցված էին Իրանի իշխանությունների հետ:

Ատենախոսության երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը, ինչպես վերնագիրն է հուշում համակողմանի ուսումնասիրության է ենթարկում ***«Այսրկովկասի հայության դիրքորոշումը ռուս-իրանական հակամարտության նկատմամբ»***: Այս ենթագլխում քննվում են Արևելյան Հայաստանի հայության կողմնորոշման և Ռուսաստանի ու Իրանի կողմից նրա նկատմամբ տարվող քաղաքականության հարցերը: Արևելյան Հայաստանի շրջաններն այս ժամանակահատվածում մասնատված էին Այսրկովկասի մի շարք (Երևանի, Գանձակի, Ղարաբաղի ու Նախիջևանի) խանությունների ու Արևելյան Վրաստանի միջև, ուստի չնայած հայության հիմնական մասի ռուսական կողմնորոշմանը, նրա տարբեր հատվածները իրենց տարբեր կերպ են պահում: Ընդհանուր առմամբ Այսրկովկասի հայությունը, ոգևորված XVIII դարի ընթացքում ցարական Ռուսաստանի կազմած ծրագրերում նախատեսվող հավատակից պետության հովանու տակ հայկական պետականության վերականգնման մասին խոստումներով, իսկ XIX դարում արդեն պարզապես գերադասելով քրիստոնյա պետության գերիշխանությունը, ուներ ռուսական կողմնորոշում: Եվ չնայած այս կողմնորոշմանը, առանձին (օր. Երևանի) խանություններում հայերը հիմնականում ձեռնպահ են մնում հակաիրանական գործողություններից, իսկ նրա հոգևոր առաջնորդները ջանում են չեզոքություն պահպանել՝ թե' Հայոց եկեղեցին և թե' հայությանը զերծ պահելու համար հակառակորդների հետապնդումներից: Իրանի ղաջարական իշխանությունները տեղյակ լինելով հայերի ընդհանուր ռուսական կողմնորոշմանը՝ անվստահությամբ էին վերաբերում նրանց: Հայ բարձրաստիճան հոգևորականներին ու ազնվականներին ջանում էին սիրաշահել կամ կաշառել, իսկ հասարակ ժողովրդին տարբեր մեթոդներով՝ տեղահանությամբ, հալածանքներով ու մահվան սպառնալիքով, փորձում էին ետ պահել ռուսների հետ համագործակցությունից:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է **«ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՀԵՏ 1807-1828 թթ.»**: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Իրանական կողմնորոշում ունեցող խաները և Ռուսաստանի դեմ տեղի ունեցած ընդվզումները 1807-1813 թթ.» վերնագրված ենթագլխում ուսումնասիրվում են իրանական կողմնորոշում ունեցող Երևանի ու Նախիջևանի խաների վարքագիծը և հակառուսական հուզումներն Այսրկովկասում տվյալ ժամանակահատվածում, որ տեղի են ունենում ոչ առանց իրանական ու օսմանյանի սադրանքների: 1807թ. Երևանի նոր խանի նշանակմամբ Իրանն ուժեղացնում է իր դիրքերը Երևանի խանությունում: Երևանի Հուսեյն Ղուլի խան Ղաջարն ի տարբերություն Երևանի նախորդ խաների, որոնք խուսանավելով հարևան ավելի հզոր երկրների տիրակալների միջև ձգտում էին պահպանել իրենց կիսանկախ վիճակը, վճռականապես ուներ իրանական կողմնորոշում՝ ամեն հարցում աջակցում էր իրանական զորքերին և իր քայլերը համաձայնեցնում իրանական իշխանությունների հետ: Իրանական կողմնորոշում ուներ նաև Նախիջևանի Քյալբա'լի խանը, որը չնայած Կովկասի ռուսական զորքերի հրամանատարության հետ ունեցած նամակագրական կապին, կատարում էր շահի հրամաններն ու աջակցում իրանական զորքերին:

Ատենախոսության այս ենթագլխում քննվում են տվյալ ժամանակահատվածում Այսրկովկասում հակառուսական հուզումներ առաջ բերող տարրերի կապը Իրանի հետ և վերջինիս դերը Ռուսաստանի դեմ բարձրացված խռովություններում:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է ***«Ռուսաստանին հպատակություն հայտնած խաների փոխհարաբերություններն Իրանի իշխանությունների հետ 1807-1813 թթ.»***: Ատենախոսության այս ենթագլխում դիտարկվում է մինչև 1806 թ. Ռուսաստանին հպատակության երդում տված խաների վարքագիծը ռուս-պարսկական պատերազմի նշված ժամանակահատվածում, որը միանշանակ չի կարելի գնահատել: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Այսրկովկասի տեղական իշխանությունները ընդհանուր առմամբ հեռու էին հակամարտ կողմերից որևէ մեկին պաշտպանելուց: Նրանք, պահպանելով իրենց նամակագրական կապերն ու շփումները Իրանի հետ, սպասողական դրության մեջ հետևում էին ռազմական գործողությունների ընթացքին, որպեսզի անցնեին ուժեղի կողմը և ապահովեին իրենց անվտանգությունը: Ռուսաստանին հաջողվում է ռազմական մեթոդներով ու մարտական հաջողությունների շնորհիվ իր ենթակայության տակ պահել ցարին հպատակություն հայտնած խանությունները և այնուհետև իր նվաճումներն Այսրկովկասում ամրագրել 1813 թ. կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով:

«Այսրկովկասի խանությունները 1813-1828 թթ.» վերնագիրը կրող երրորդ ենթագլխում ուսումնասիրվում է Ռուսաստանի տիրապետության տակ անցած խանություններում տեղի ունեցած փոփոխությունները նշված ժամանակահատվածում և խաների քաղաքական պահվածքը ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում: Այսրկովկասի ռուսական իշխանությունները առաջին ռուս-պարսկական պատերազմին հաջորդած խաղաղ ժամանակահատվածն օգտագործում են հակառուսական տրամադրություններ ունեցող խաներից ազատվելու և ռուսական կառավարման համակարգի տարրերն այնտեղ ներմուծելու համար: Իրանն իր հերթին ոչ միայն հովանավորում էր հակառուսական տարրերին, այլև հնարավորինս փորձում օգտագործել իրեն ապավինած նախկին խաներին ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում նախկինում նրանց հպատակ Այսրկովկասի տարածքների համար մղվող պայքարում: Այսրկովկասի խաներից ոմանք, չնայած ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ընթացքում իրանական կողմում հանդես գալուն, ժամանակին ընդունում են Ռուսաստանի հպատակությունը և հարմարվելով ստեղծված իրավիճակին՝ կարողանում են իրենց դիրքն ու հարստությունը որոշ ժամանակ ևս պահպանել արդեն ռուսական կառավարման պայմաններում: Խաների մի մասն էլ իրենց առավել ակնհայտ իրանական կողմնորոշման համար, զրկվում են իրենց Այսրկովկասյան տիրույթներից ու իշխանությունից՝ հեռանալով Իրան:

Եզրակացության մեջ ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, արվում եզրակացություններ:

Ուսումնասիրելով Հարավային Կովկասի տեղական իշխանությունների փոխհարաբերություններն Իրանի կենտրոնական իշխանության հետ XVIII դարի վերջից մինչև 1828 թվականն ընկած ժամանակաշրջանում՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. XVIII դարի երկրորդ կեսում ինքնուրույնություն ձեռք բերած Այսրկովկասյան իշխանությունները՝ Արևելյան Վրաստանի (կամ Քարթլ-Կախեթի) թագավորությունը, Երևանի, Նախիջևանի, Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Ղուբայի, Բաքվի, Դերբենդի ու Թալիշի խանությունները և Ելիսուի, Կուտկաշենի, Արեշի, Ղազախի ու Շամշադինի սուլթանությունները իրենց մեջ կրում էին նախկին իրանական

տիրապետության ժամանակաշրջանի վարչա-քաղաքական բաժանումների, բյուրոկրատական վարչակարգի և էթնիկ քաղաքականության հետքերը: Այսրկովկասում XVIII դարի երկրորդ կեսի առավել զորեղ իշխանություններն էին Քարթլ-Կախեթի թագավորությունը, Շաքիի, ապա՝ Ղուբայի խանությունները:

2. Նադիր շահի մահից հետո թուլացած Իրանը՝ XVIII դարի երկրորդ կեսին կորցնում է իր գերիշխանությունը Այսրկովկասյան տարածքների նկատմամբ: Իրանի շահի գահին հավակնող մի շարք իշխանավորների ժամանակ առ ժամանակ հաջողվում է իրենց ազդեցության տակ առնել Հարավային Կովկասի խաներից ոմանց, նրանցից հարկագանձումներ կատարել, սակայն մինչև 1795 թ. Այսրկովկասի տեղական իշխանությունները, ընդհանուր առմամբ, չէին գտնվում Իրանի տիրապետության տակ: 1795թ. Այսրկովկասյան արշավանքը թեև Աղա Մուհամմադ խանին թույլ է տալիս կարճ ժամանակով Այսրկովկասում վերականգնել իրանական տիրապետությունը, սակայն 1796 թ. ռուսական զորքերի պատասխան արշավանքը վերացնում է այն, եթե ոչ ամբողջովին, ապա գոնե մասամբ: XVIII դարի 80-ականներից Իրանի ու Ռուսաստանի միջև խուսանավող Այսրկովկասի տեղական իշխանությունները բանակցությունների մեջ էին թե' իրանական և թե' ռուսական իշխանությունների հետ՝ խոստանալով իրենց հպատակությունը երկուսին էլ և ջանալով այդ կերպ ապահովել իրենց անվտանգությունը հակամարտ կողմերի հնարավոր ռազմական ձեռնարկումների դեպքում:

3. Կասպից ծովի ու նրա մերձափնյա շրջանների նվաճման Ռուսաստանի ծրագրերը ավելի պարզորոշ ու իրական են դառնում XVIII դարի երկրորդ կեսին, Իրանի թուլացման և տարածաշրջանում նրա դերի նվազման ժամանակահատվածում: Հանդես գալով Այսրկովկասի քրիստոնյա բնակչության պաշտպանի ու հովանավորի դիրքերից՝ ռուսական իշխանությունները կարողանում են իրենց կողմը գրավել նրանց համակրանքն ու աջակցությունը: Արդյունքում, Արևելյան Վրաստանի Հերակլ թագավորն առաջիններից է լինում, որ ապավինում է Ռուսաստանի հովանավորությանը և նպաստում նրա ներթափանցմանը Այսրկովկաս: Այնուամենայնիվ, Ռուսաստանի դիրքերը Կովկասում XVIII դարի երկրորդ կեսում դեռ ամուր չէին:

4. XIX դարի սկզբին ռուս-իրանական փոխհարաբերությունները խիստ սրվում են՝ հանգեցնելով նրանց միջև ռազմական բախումների: Հակառակ նախորդ դարում ծրագրված բուֆերային պետություններ ստեղծելու իր մտադրությանը՝ Ռուսաստանն այժմ ծրագրում է ընդգրկել Այսրկովկասը իր կայսրության կազմում, որի վառ ապացույցն է դառնում Քարթլ-Կախեթի թագավորության վերացումը: Իրանը, որին աջակցում էր Օսմանյան կայսրությունը, նաև քաջալերում էին Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան, ջանում էր վերականգնել իր տիրապետությունը Այսրկովկասում: Այս պայմաններում Այսրկովկասի խաները հիմնականում շարունակում էին խուսանավել Ռուսաստանի ու Իրանի միջև, որն առավել ակնառու է իրանական և ռուսական իշխանությունների հետ նրանց նամակագրությունը բովանդակող փաստա-վավերագրական նյութերում:

5. Ռուս-իրանական առաջին պատերազմի սկզբնական շրջանում (1804-6թթ.) Այսրկովկասի ռուսական իշխանություններին հաջողվում է դիվանագիտական ու ռազմական միջոցներով ունենալ զգալի ձեռքբերումներ: Ռուսաստանը քայլ առ քայլ նվաճում է դեպի Կասպից ծով տանող տարածքները: Իրանն իր հերթին ջանքեր է գործադրում Ռուսաստանի դեմ պայքարում Այսրկովկասի խաների աջակցությունը ստանալու համար: Նրա դիվանագիտական քայլերի հետևանքը կարելի է համարել ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ցիցիանովի սպանությունը Բաքվի մատույցներում և դրան հաջորդած որոշ ժամանակավոր ռազմական

հաջողությունները Այսրկովկասի առանձին շրջաններում, որոնց ուղեկցում էր Ռուսաստանի գերիշխանության դեմ բարձրացած խռովությունների ալիքը: Այնուամենայնիվ կարճ ժամանակում Ռուսաստանին հաջողվում է ամրացնել իր տարածքային ձեռքբերումներն Այսրկովկասում, որոնք այնուհետև աննշան փոփոխություններ են կրում մինչև առաջին ռուս-պարսկական պատերազմի ավարտը 1813 թ.:

6. Այսրկովկասի հայությունը, նրա հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները ներքաշվում են ռուս-իրանական հակամարտության մեջ: Նրանք դիտարկվող ժամանակաշրջանում ելնելով կրոնական ընդհանրությունից, նաև սկզբնական շրջանում Ռուսական կայսրության կողմից շռայլվող հայկական պետականության վերականգնման մասին խոստումներով, ընդհանուր առմամբ ունեին ռուսական կողմնորոշում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով քաղաքական իրադրությունը, տեղի խանից և Իրանի ու Թուրքիայի իշխանություններից կախվածությունը, հայոց կաթողիկոսները, որպես կանոն, ձեռնպահ են մնում այդ կողմնորոշմանը համապատասխան քայլեր ձեռնարկելուց: Նրանք, ընդհակառակը, կարևորելով բարեկամական հարաբերությունները Իրանի իշխանությունների հետ, հաճախ փորձում էին նրանց միջոցով (հրամանագրերով) ազդել տեղի իշխանությունների վերաբերմունքի վրա, և պաշտպանել ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ ընդհանրապես Այսրկովկասի հայության շահերը մահմեդական պաշտոնյաների հակահայկական արարքներից ու կրոնական անհանդուրժողականությունից: Իրանական իշխանություններն ընդհանուր առմամբ հայերի նկատմամբ ունեցած իրենց անվստահության հետևանքով երբեմն փորձում էին նրանց սիրաշահել, իրենց կողմը գրավել նրանց, երբեմն էլ պատժում էին արևելյան բռնակալությանը հատուկ մեթոդներով:

7. Առաջին ռուս-իրանական պատերազմի ընթացքում խաների փոփոխությունների միջոցով Իրանին հաջողվում է իր դիրքերը որոշ չափով ամրացնել Երևանի ու Նախիջևանի խանություններում: Եվրոպացի մասնագետների օգնությամբ վերափոխվում են Իրանի ռազմական ուժերը, հիշյալ խանություններում գտնվող մի շարք ամրություններ ու նորերն են կառուցվում, համալրվում են Իրանի ռազմական միջոցներն ու տեխնիկան: Իրանը կապ պահպանելով Ռուսաստանի կողմից գրավված շրջանների ըմբոստ տարրերի հետ՝ խրախուսում ու նյութապես աջակցում էր նրանց հակառուսական ընդվզումներին: Ֆրանսիայից, ապա Անգլիայից ստացվող օգնության շնորհիվ Իրանը ջանում էր Այսրկովկասի խռովարարների հետ համատեղ քայլեր ձեռնարկել Ռուսաստանի դեմ և դուրս մղել նրան նվաճված տարածքներից, որոնք սակայն արդյունավետ չեն լինում:

8. Առաջին ռուս-պարսկական պատերազմի (1804-1813 թթ.) ընթացքում Ռուսաստանին հպատակություն հայտնած խաները ընդհանուր առմամբ չունեին հստակ քաղաքական դիրքորոշում: Նրանք, պահպանելով իրենց նամակագրական կապերն ու շփումները Իրանի հետ, սպասողական դրության մեջ հետևում էին ռազմական գործողությունների ընթացքին, որպեսզի անցնեին ուժեղի կողմը և ապահովեին իրենց անվտանգությունը: Ռուսաստանին հաջողվում է զենքի ուժով իր ենթակայության տակ պահել իրեն հպատակությունն ընդունած խաներին և այնուհետև իր նվաճումներն Այսրկովկասում ամրագրել 1813 թ. կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով:

9. Ռուսաստանի տիրապետությունը Այսրկովկասում ուներ բազմաթիվ հակառակորդներ տեղի իշխանավորների ու հասարակ ժողովրդի շրջանում, որոնք Իրանի իշխանությունների հրահրմամբ ու ակտիվ աջակցությամբ թե' ռուս-իրանական առաջին պատերազմի տարիներին, թե' նրանից հետո շարունակում էին

ժողովրդական հուզումներ առաջ բերել Կովկասի տարբեր շրջաններում: Գիտակցելով հակառուսական տրամադրություններ ունեցող իշխանավորների վտանգավորությունը ռուսական տիրապետության համար՝ Այսրկովկասի ռուսական իշխանությունները ջանում են նրանց աստիճանաբար զրկել իրենց իշխանությունից և հեռացնել իրենց տարածքներից: Իրանն, իր հերթին, ոչ միայն հովանավորում էր հակառուսական տարրերին, այլև հնարավորինս օգտագործում նրանց Այսրկովկասի տարածքների համար մղվող պայքարում: Այսրկովկասի խաներից շատերը հարմարվելով ստեղծված իրավիճակին՝ կարողանում են ժամանակին վերակողմնորոշվել դեպի Ռուսաստանը և դրա շնորհիվ իրենց իշխանությունը որոշ ժամանակ ևս պահպանել ռուսական կառավարման պայմաններում, որոշ խաներ էլ նախընտրելով իրանական տիրապետությունը, զրկվում են Ռուսաստանի տիրապետության տակ անցած իրենց տիրույթներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Երևանի վերջին խան Հուսեյն Ղուլի սարդարը, Մերձավոր Արևելք, VIII, Երևան, 2012, էջ 322-333:
2. Երևանի ու Ղարաբաղի խանությունները ռուս-իրանական հակամարտության կիզակետում, Արևելագիտության հարցեր, VII, Երևան, 2012, էջ 469-483:
3. Շիրվանի խանությունը XVIII դարի երկրորդ կեսին – XIX դարի սկզբին, Կանթեղ, Երևան, 2013, էջ 187-195:

МАХБУБЕ СЕДИГИ

ВЗАИМОТНОШЕНИЯ МЕСТНЫХ ВЛАСТЕЙ ЮЖНОГО КАВКАЗА С ЦЕНТРАЛЬНОЙ ВЛАСТЬЮ ИРАНА С КОНЦА XVIII ВЕКА ДО 1828 Г.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- “Всемирная история”.
Защита состоится 18 сентября 2014 г., в 14:00, часов на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению вопросов связанных с взаимоотношениями местных властей Закавказья с Ираном в период после смерти Надир Шаха в 1747г., образования здесь мелких полузависимых государственных единиц (царства Картли-Кахетии, ханств Еревана, Карабага, Нахичевана, Кубы, Шаки, Ширвана, Ганджи, Дербенда, Баку и Талыша, а также султанств Елису, Куткашена, Ареша, Казаха и Шамшадиля) и перехода их под власть России, закрепленного Туркменчайским договором заключенным в 1828г.

Основная часть Закавказья находившаяся долгие века под властью иранских государств Сефевидов и Афшаридов, носило в себе отпечаток их административных делений и этно-религиозной политики, которое и легло в основу вышеназванных мелких государственных образований сформировваных в регионе во второй половине XVIII века. Правящие круги этих государственных образований, имевшие тесные культурные и религиозные связи с иранским государством, скрепленные иногда семейно-родственными узами, вовлекаются в борьбу между Россией и Ираном. Многие из них оказавшиеся в сложной политической ситуации, ведут политику лавирования между Ираном и Россией. Изучение связей местных властей Закавказья с Ираном в данный период имеет важное научное значение, а также политическую актуальность, так как помогает изучить причины и раскрыть корни некоторых проблем Закавказья в нынешние времена.

Целью диссертационной работы является изучение взаимоотношений закавказских ханов, грузинских царей и царевичей с иранскими властями в период политического наступления России в Южном Кавказе и его покорения.

Отдельные аспекты данной работы освещались в советской и иранской историографии, но комплексное рассмотрение темы и объективное изучение данного вопроса до сих пор отсутствует в исследованиях как местных, так и зарубежных историков.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность темы, определяются цели и задачи исследования, разъясняется научная новизна, методологическая основа и практическое значение работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации, озаглавленная “Местные власти Южного Кавказа во второй половине XVIII века: начало русско-иранского противоборства”, состоит из трех параграфов. Здесь детально рассматриваются характерные особенности мелких государственных образований Закавказья получивших фактическую независимость после смерти Надир Шаха в 1747г. и начало русско-иранского противоборства за власть над регионом. В первом параграфе - “Местные власти Южного Кавказа после смерти Надир шаха” анализируется влияние административной структуры иранских государств Сефевидов и Афшаридов на особенности формирования ханств, султанств и Картли-Кахетинского царства, а также последствия социально-этнической политики иранских государств в Закавказье. Рассматриваются вопросы их этнополитического состояния, происхождение некоторых ханских фамилий, их политики в отношении соседних ханств и выделение наиболее сильных из них.

Во втором параграфе - “Борьба претендентов на престол шаха Ирана за власть над территорией Южного Кавказа в 1748-1795гг.”, подробно рассматриваются формально признанная власть Адил и Ибрагим шахов в Закавказье в 1747-9гг, а также борьба Азат Хана, Фатали Хан Афшара, Мухаммад Хасан Хан Каджара и Керим Хана с некоторыми ханами Закавказья и их кратковременное подчинение своей власти. В этом параграфе анализируются также шаги предпринятые Ага Мухаммад Ханом с целью подчинения местных властей Закавказья, а также попытки царя Грузии и ханов соединить свои силы и создать политические союзы для противостояния агрессивной политике основоположника Каджарской династии. Освещаются военные предприятия Ага Мухаммад Хана, его опустошительные походы в Ереванское, Талышинское и Карабагское ханства, взятие Тифлиса и установление иранской власти над некоторыми ханствами Закавказья.

В третьем параграфе - “Завоевательная политика России в Закавказье в XVIII веке” тщательно рассматривается политика Российской империи в Закавказье со времен Петра I-го до конца правления Екатерины II-ой, ее цели, дипломатические и военные методы и конкретные шаги, предпринятые в этом направлении.

Вторая глава диссертации - “Взаимоотношения местных властей Южного Кавказа с Ираном (1798-1806гг.) и ориентация армян в отношении русско-иранского противоборства” состоит из трех параграфов. В первом параграфе - “Ориентация ханов Закавказья в отношении русско-иранского противоборства и их взаимоотношения с Ираном в 1798-1803гг.” детально рассматриваются вопросы взаимоотношений Закавказских правителей с властями Ирана и России в период активизации наступательной политика царизма в Закавказье, ознаменованным присоединением Восточно-грузинского царства к Российской империи.

Во втором параграфе - “Ханы Закавказья в начальном периоде русско-иранской войны и их взаимоотношения с иранскими властями (1804-1806гг.)” подробно рассматриваются вопросы ситуации сложившейся вокруг ханств Закавказья в условиях русско-иранской войны, их отношения с русскими и иранскими властями. Некоторые ханы, лавирующие между двумя державами, под впечатлением жестокой расправы с непокорным ханом Ганджи, добровольно вступают в подданство России, а Бакинский хан Хусейн Кули подбодренный иранскими властями, решается на убийство кн. Цицианова, главнокомандующего русскими войсками в Закавказье.

В третьем параграфе данной главы - “Ориентация армян Закавказья в отношении русско-иранского противоборства” освещаются вопросы отношений армян, их

духовных и политических предводителей с русскими и иранскими властями. Армяне, в основном имевшие русскую ориентацию, но жившие в ханствах, где правили мусульмане, вели себя не одинаково. Духовные лидеры принимая во внимание, что большая часть армян жила также на территориях Ирана и Турции, старались сохранить терпимое отношение иранских и османских властей в отношении армян. В этом параграфе освещается также политика Ирана в отношении армян.

Третья глава диссертации - “Взаимоотношения ханов Закавказья с Ираном в 1807-1828гг.”, также состоит из трех параграфов. В первом параграфе – “Ханы имевшие про-иранскую ориентацию и восстания против власти России в 1807-1813гг.” анализируются деятельность ханов Еревана и Нахичевана, назначенных на пост правителей этих ханств иранскими властями. В этом параграфе освещаются также причины некоторых восстаний в разных областях территории перешедшей под власть России, связь подстрекателей этих возмущений с Ираном и Турцией.

Во втором параграфе - “Взаимоотношения ханов, перешедших в подданство России, с властями Ирана в 1807-1813гг. ” рассматриваются связи и отношения ханов, вступивших в подданство России, с иранскими властями в данном периоде и их последствия. Эти ханы в основном поддерживали связь с иранскими властями, но опасаясь расправы русских властей, воздерживались от военных действий против России.

В третьем параграфе, озаглавленном “Ханства Закавказья в 1813-1828гг.”, рассматриваются перемены в ханствах перешедших под власть России в период мира (1813-1826гг.) между двумя русско-иранскими воинами, политика Русских властей в отношении ханов, их бегство в Иран, в последствии их участие в военных действиях второй русско-персидской войны на стороне Каджаров.

В заключении обобщаются основные выводы, полученные в ходе подготовки диссертации.

MAHBUBE SEDIQI

THE RELATIONS OF THE LOCAL POWERS OF SOUTHERN CAUCASUS WITH THE CENTRAL GOVERNMENT OF IRAN FROM THE END OF XVIII CENTURY DOWN TO 1828

The defense of the dissertation will take place at 14:00, on the 18th of September, 2014 at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.0.

SUMMARY

The dissertation investigates a complex of issues referring to the relations between the local powers of South Caucasus in the period after the death of Nadir Shah in 1747, the formation of half-dependant state units there (like the Kingdom of South Georgia, the khanates of Yerevan, Karabagh, Nakhichevan, Quba, Shaki, Shirvan, Ganja, Derbend, Baku and Talish, and the sultanates of Elisu, Kutkashen, Aresh, Qazakh and Shamshadil) and their passage under the rule of Russia confirmed in the treaty of Turkmenchay concluded in 1828.

The major part of the Transcaucasia had been for a long period under the rule of Safavid and Afsharids shahs'. Therefore the political units formed after Nadir's death in Trancaucasia bore the traces of the administrative divisions of the former Iranian states and their ethno-religious policy. The rulers of these half-dependant state formations had close religious and cultural ties with Iran, strengthened sometimes with family ties. From the late 1770-s they were involved in the struggle between Iran and Russia, and started maneuvering between the two great states. The investigation of the ties and the relations between local powers of Transcaucasia and Iran in the given period has important scientific significance and political actuality for revealing the roots and reasons of many ethno-religious problems in todays' Transcaucasia.

The aim of the work is a profound study of the relations between Transcaucasian Moslem khans, kings and princes of Georgia in the period of Russia's political penetration into South Caucasus and its subjugation.

Some aspects of the present work had been studied by the Soviet and Persian historians, but yet the theme is not investigated profoundly and objectively.

The thesis consists of an introduction, three chapters, conclusion and a list of used sources and literature.

The actuality of the theme, the aims and the tasks of the investigation, the originality of the work, its practical significance and a survey of the used sources and literature are represented in the introduction of the thesis.

The first chapter of the dissertation entitled "The local powers of the South Caucasus in the second half of the XVIII century. The beginning of the Russo-Persian conflict," consists of three paragraphs. The chapter is devoted to the investigation of the characteristic features of the small political units of Transcaucasia, formed there after the death of Nadir Shah in 1747 and the beginning of the struggle between Iran and Russia for the subjugation of the region. The author considers the results of the ethno-religious policy of Safavid and

Afsharid rulers and the influence of the administrative structure of their states over the political units (khanates, sultanates and the kingdom of Eastern Georgia) of Transcaucasia in the first paragraph entitled "The local powers of the Southern Caucasus after Nadir Shah's death".

The second paragraph entitled "The struggle of the claimants to the shah's throne in Iran for the predominance over the territory of the Southern Caucasus in 1748-1795", studies the formal rule of the shahs Adil and Ibrahim over Transcaucasia in 1747-9, the campaigns of Azad Khan, Fathali Khan Afshar, Muhammad Hasan Khan Qajar and Kerim Khan aimed to subjugate some khans of Transcaucasia and their temporary successes in obtaining power over some of them. The author considers likewise the attempts of the local rulers of Transcaucasia to join their forces against Agha Muhammad Khan, results of his campaigns and the behavior of some of the khans.

The third paragraph is entitled "The aggressive policy of Russia in Transcaucasia in XVIII century". The author examines Russia's aims and plans as regards Transcaucasia, the diplomatic and military steps taken in this direction by Russian government from the times of Peter I down to the death of Empress Katherine II.

The second chapter of the work - "The relations of the local powers of Southern Caucasus with Iran (1798-1806) and the political orientation of the Armenians", consists of three paragraphs. The relations of the Transcaucasian rulers with the governments of Iran and Russia in the period of the activized aggressive policy of Russian empire are considered in the first paragraph entitled "The political orientation of the khans of Transcaucasia as regards Russo-Persian conflict and their relations with Iran (1798-1803)". The second paragraph, "The khans of Transcaucasia at the beginning stage of Russo-Persian war and their relations with Iran (1804-6)", deals with the same problem in the first two years of the Russo-Persian war, when some of the khans impressed with the occupation of Ganja and the death of its khan, submitted to the Russian power.

The problems of the political orientation of the Armenians of Transcaucasia, the relations of their religeous and civil leaders with the Russian and Persian governments are elucidated in the third paragraph having the title "The political orientation of the Armenians of Transcaucasia as regards the Russo-Persian conflict." The Armenians, who had Russian orientation on the whole, but lived in the regions encluded in different khanates, did not have similar behaviour as regards the great powers claiming for predomination over them. The high clergymen took into account that major parts of the Armenian nation lived in the territories of Ottoman Turkey, Qajar Iran and Russian Empire, and tried to keep good relationship with the governments of these great states. A major attention of the author in this paragraph has been focused on revealing the main tendencies traced in the policy of Qajar Iran as regards the Armenians of Transcaucasia.

The third chapter of the thesis, entitled "The relations of the Transcaucasian khans with Iran in 1807-1828", consists of three paragraphs. In the first paragraph, "The khans having Iranian orientation and uprisings against Russian rule in 1807-1813", the activities of the khans of Yerevan and Nakhichevan are analised as well as their participation and the role of Iran in the revolts risen in the regions under Russian rule. The author considers the causes and characteristic features of the rebellions, the ties and relations of the leaders of the rebels with Iranian and Ottoman governments, the plans of joint actions against Russia and their failure.

The second paragraph entitled "The relations of the khans, subject to Russia, with the powers of Iran in 1807-1813, contains a detailed analysis of the ties and relations of the

khans, subject to Russia with Persian government in the given period, the reasons of their behavior and its results.

The third paragraph, “The Transcaucasian khanates in 1813-1828” considers the changes performed by Russian government in the khanates, subject to Russia, in the period of peace between two Russo-Persian wars, the causes of some of the khans’ flight to Iran and their further participation in the second Russo-Persian war on the side of Qajar Iran

The main results of the work are summarized in the Conclusion.